ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձիք՝ Ռուստամ Բադասյան և Սուրեն Գրիգորյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2021թ. մայիսի 18-ից 20-ը:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկո:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Արդարադատության թվային մարտահրավերները նոր դարաշրջանում» խորագրով արդարադատության նախարարների հանդիպմանը, ինչպես նաև երկկողմ հանդիպում Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի հետ:

Քննարկված թեմաները՝ «Արդարադատության թվային մարտահրավերները նոր դարաշրջանում»:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ռուսաստանի Դաշնությունում (Մոսկվա) 2021թ. մայիսի 19-ին կայանալիք «Արդարադատության թվային մարտահրավերները նոր դարաշրջանում» խորագրով արդարադատության նախարարների հանդիպմանը մասնակցելու, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի հետ հանդիպում ունենալու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանը և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանը ս.թ. մայիսի 18-ից 20-ը գտնվել են Մոսկվայում:

«Արդարադատության թվային մարտահրավերները նոր դարաշրջանում» խորագրով արդարադատության նախարարների հանդիպման ընթացքում քննարկվել են

էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրմանը, փաստաթղթաշրջանառության միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծմանը, թվային դարաշրջանում արդարադատության մատչելիությանը, քրեական արդարադատության համակարգի վրա թվային տեխնոլոգիաների ազդեցությանն առնչվող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր: Հանդիպմանը մասնակից արդարադատության նախարարներին հնարավորություն է ընձեռվել ներկայացնել իրենց երկրներում վերոնշյալ ոլորտներում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև էլեկտրոնային գործիքների կատարելագործմանն ուղղված հետագա քայլերը:

Հարկ է նշել, որ հանդիպմանը մասնակցել են նաև Բելառուսի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Սինգապուրի Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ու այլ պետությունների արդարադատության նախարարները:

Հանդիպման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով էլեկտրոնային արդարադատության ոլորտում ՀՀ կողմից իրականացված նշանակալի բարեփոխումները և նախատեսվող միջոցառումները: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը մասնավորապես, անդրադարձել է ՀՀ կառավարության կողմից 2019թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշմամբ հաստատված 2019-2023թթ. Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությանը և դրանից բխող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքին, ինչպես նաև նոր, միասնական էլեկտրոնային արդարադատության պլատֆորմի՝ e-justice.am-ի և նրա մաս կազմող e-court-ի ներդրմանը, որը նախատեսում է դատական գործընթացների ամբողջական թվայնացում, դատարանների ներքին փաստաթղթաշրջանառություն, դատարանների և պետական ու տեղական իշխանությունների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում, դատական որոշումների ու դատական գործերի արխիվացում և այլն: Հանդիպման ընթացքում Ռուստամ Բադասյանը ներկայացրել է նաև ներդրված վճարման կարգադրությունների էլեկտրոնային համակարգի առավելությունները, դատարանների

ծանրաբեռնվածությունը նվազեցնելուն միտված քաղաքացիական, վարչական և քրեական դատավարությունների բոլոր գործընթացները թվայնացնելու ծրագրերը, դատավորների թեկնածուների հոգեբանական թեստավորման նպատակով արդեն իսկ ներդրված էլեկտրոնային համակարգը, սնանկության գործընթացների թվայնացման ծրագրերը, հանրային ծառայությունների միասնական գրասենյակի գործարկումը և այլն:

Ելույթի ընթացքում արդարադատության նախարարի պաշտոնակատարը անդրադարձել է նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ոլորտում ներդրվող նոր էլեկտրոնային համակարգին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտի ծառայությունները էլեկտրոնային հարթակով ստանալու հնարավորություններին, ինչպես նաև իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային հարթակին: Վերջինիս մասով Ռուստամ Բադասյանը հանդիպման մասնակիցներին տեղեկացրել է, որ տվյալ էլեկտրոնային համակարգը իրավաբանական անձանց հնարավորություն է տալիս անհրաժեշտ տեղեկությունը պետությանը տրամադրել էլեկտրոնային ձևով, ինքնաշխատ եղանակով գեներացնել իրավաբանական անձի կորպորատիվ կառուցվածքը՝ արտացոլելով իրական շահառուների ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի կապերը իրավաբանական անձի հետ: Համակարգը արտացոլում է նաև տեղեկատվություն այն մասին, թե արդյոք իրական շահառուն քաղաքական ազդեցություն ունեցող անձ է, թե՝ ոչ:

Ամփոփելով խոսքը՝ ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանը շեշտել է էլեկտրոնային արդարադատության ոլորտում Հայաստանի կողմից իրականացվող բազմաթիվ հավակնոտ նախագծերը, մեծաթիվ անելիքները և գործընկերների հետ փորձով կիսվելու շահագրգռվածությունը:

Այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանը երկկողմ հանդիպում է ունեցել նաև Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կոնստանտին Չույչենկոյի հետ: Հանդիպմանը ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատարը ՌԴ արդարադատության նախարարին է ներկայացրել էլեկտրոնային արդարադատության ոլորտում իրականացվող համապարփակ բարեփոխումները՝ ուղղված քաղաքացիական, վարչական և քրեական

դատավարությունների բոլոր գործընթացների, սնանկության, դատական ակտերի կատարման ոլորտների, նոտարական ծառայությունների թվայնացմանը, այնուհետ ընդգծել, որ Հայաստանը շահագրգռված է երկկողմ համագործակցությամբ՝ ուղղված ԱՊՀ շրջանակում փաստաթղթաշրջանառության միասնական հարթակի ստեղծմանը, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման ոլորտում փորձի փոխանակմանը: Նախարարը նաև շնորհակալություն է հայտնել ՌԴ կողմին միջնորդական կարևոր առաքելության համար, ներառյալ՝ գերիների հայրենադարձման հարցում և հույս հայտնել, որ ջանքերը կշարունակվեն բոլոր պահվող անձանց վերադարձն ապահովելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ՀՀ և ՌԴ արդարադատության նախարարությունների միջև առկա փոխշահավետ համագործակցության խորացման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Վերը նշված հանդիպումներին մասնակցել է նաև ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանը: Նախարարի տեղակալի մասնակցությունը կարևոր էր այն համատեքստում, որ հենց նա է համակարգում 2019թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշմամբ հաստատված 2019-2023թթ. Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքները, այդ թվում արդարադատության ոլորտում թվայնացման գործընթացները:

ՀՀ արդարադատության նախարարի

պաշտոնակատար

Recoverable Signature

X

Rustam Badasyan

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

Ռուստամ Բադասյան

21.05.2021թ.